

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌՔԻ Ու ՎԱՃԱՌՔԻ  
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
ԹԻՎ \_\_\_\_\_**

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան

«\_\_\_\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ \_\_\_\_\_ մի կողմից, և \_\_\_\_\_, գործելով համաձայն բանկի կանոնադրության, ի դեմս գործադիր տնօրեն (վարչության նախագահ)՝ \_\_\_\_\_ մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կնքեցին սույն գլխավոր համաձայնագիրը հետևյալի մասին.

**Հոդված 1. Համաձայնագրի առարկան**

Սույն համաձայնագրով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերի առքի կամ վաճառքի գործարքների կնքելու, կատարելու հետ կապված Կողմերի միջև հարաբերությունները՝ սահմանելով վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները:

**Հոդված 2. Հիմնական հասկացությունները**

2.1 Սույն համաձայնագրում կիրառվող բառակցքում մեծատառով գրված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

2.1.1 **Կենտրոնական բանկ**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

2.1.2 **Բանկ**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ, որը Կենտրոնական բանկի հետ կնքել է սույն համաձայնագիրը, սույն համաձայնագրի Հոդված 3-ով սահմանված կարգով գրանցվել է Համակարգում:

2.1.3 **Բանկի կող**՝ Կենտրոնական բանկի կողմից Բանկին տրամադրված նույնականացնող հնգանիշ կոդ.

2.1.4 **Թողարկող**՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.

2.1.5 **Պարտատոմս**՝ Թողարկողի կողմից թողարկված պետական (գանձապետական) պարտատոմս:

2.1.6 **Պարտատոմսի առք**՝ գործարք, որով Բանկը պարտավորվում է Գործարքի կատարման ամսաթվին Կենտրոնական բանկին վաճառել սույն համաձայնագրով նախատեսված Պարտատոմսերը, իսկ Կենտրոնական բանկը պարտավորվում է Բանկին վճարել համապատասխան ՀՀ դրամ ձեռք բերված Պարտատոմսերի դիմաց:

2.1.7 **Պարտատոմսի վաճառք**՝ գործարք, որով Կենտրոնական բանկը պարտավորվում է Գործարքի կատարման ամսաթվին Բանկին վաճառել սույն համաձայնագրով նախատեսված Պարտատոմսերը, իսկ Բանկը պարտավորվում է Կենտրոնական բանկին վճարել համապատասխան ՀՀ դրամ ձեռք բերված Պարտատոմսերի դիմաց:

2.1.8 **Հայտ (ՀՏ 502)**՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Գործարք կնքելու առաջարկ, ընդ որում՝ Աճուրդի յուրաքանչյուր Հայտում Բանկը կարող է առավելագույնը 10 (տասը) Առաջարկություն ներկայացնել: Երկկողմանի գործարքի Հայտում Բանկը ներկայացնում է 1 (մեկ) առաջարկություն:

2.1.9 **Հայտի ընդունում**՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկին ներկայացված Հայտը մշակման նպատակով Կենտրոնական բանկի կողմից ընդունելու վերաբերյալ ծանուցման (ՀՏ 534) ուղարկում Բանկին, որի միջոցով Բանկը տեղեկացվում է ընդունված հայտի կարգավիճակի վերաբերյալ: Մինչև ուղարկված Հայտի վերաբերյալ Բանկի կողմից համապատասխան ծանուցում ստանալը, ուղարկված Հայտը համարվում է Համակարգի կողմից չընդունված:

2.1.10 **Հայտի հաստատում, մասնակի հաստատում, Գործարքի կնքում**՝ Բանկի կողմից ներկայացված Գործարք կնքելու առաջարկը բավարարելու (մասնակի բավարարելու) (ՀՏ 512) գործընթաց: Բանկի կողմից սույն համաձայնագրի համաձայն առաքված ցանկացած Հայտ հանդիսանում է գործարքի կնքման օֆերտա, որը պարունակում է Բանկի կողմից վաճառվող/գնվող Պարտատոմսի անվանական արժեքի առավելագույն սահմանաքանակ: Ընդ որում, առաջարկվող Պարտատոմսի անվանական արժեքի սահմանաքանակ է համարվում տվյալ Հայտում նշված Առաջարկությունների անվանական արժեքների հանրագումարի առավելագույն չափը, ինչպես նաև մինչև այդ առավելագույն չափը ընկած ցանկացած դրական անվանական արժեք, որի առավելագույն անվանական արժեքի բավարարումը համարվում է լրիվ, իսկ մինչև առավելագույն անվանական արժեքը ընկած ցանկացած դրական անվանական արժեքի բավարարումը համարվում է մասնակի բավարարում, ինչը (հայտի հաստատումը կամ բավարարումը) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի իմաստով համարվում է ակցեպտ:

2.1.11 **Հայտի մերժում**՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից չընդունելու մասին ծանուցում (ՀՏ 534):

2.1.12 **Գործարք**՝ Կենտրոնական բանկի կողմից Պարտատոմսի առք կամ Պարտատոմսի վաճառք:

2.1.13 **Կենտրոնական պահառու**՝ Պարտատոմսերի հաշվառումն իրականացնող իրավասու մարմին, որի գործառույթներն իրականացնում է Կենտրոնական բանկը:

2.1.14 **Կնքման ամսաթիվ (օր)**՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկը հաստատում (մասնակի հաստատում) է Բանկից ստացված Հայտը:

2.1.15 **Կատարման ամսաթիվ (օր)**՝ այն Բանկային օրն է, երբ պետք է իրականացվի կնքված Գործարքով ամրագրված Գործարքի կատարման համար անհրաժեշտ Պարտատոմսերով և դրամային գործառնությունները: Եթե Կատարման ամսաթիվը հանդիսանում է ոչ Բանկային օր, ապա Կատարման ամսաթիվ է համարվում այդ օրվան հաջորդող առաջին Բանկային օրը:

2.1.16 **Պարտատոմսի թողարկման համար**՝ Թողարկողի կողմից պարտատոմսի յուրաքանչյուր թողարկմանը հատկացված պետական գրանցման համարը:

2.1.17 **Պարտատոմսի անվանական արժեք**՝ դրամական միավոր, որը Թողարկողը պարտավոր է վճարել պարտատոմսի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը մարման վճարման ամսաթվին:

2.1.18 **Եկամտաբերություն**՝ Բանկի կողմից ներկայացված Պարտատոմսի յուրաքանչյուր առաջարկության նկատմամբ տարեկան մինչև մարում եկամտաբերությունը (ոչ ամբողջական մասը 4 (չորս) նիշի ճշտությամբ):

2.1.19 **Առաջարկություն**՝ Հայտում նշված Պարտատոմսի անվանական արժեքի և եկամտաբերության եզակի համախումբ:

2.1.20 **Գործարքի գումար**՝ Կնքված Գործարքին համապատասխան յուրաքանչյուր եկամտաբերությամբ բավարարված Պարտատոմսի անվանական արժեքի դրամային համարժեքը, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները և դրանց կիրառման մեխանիզմները սահմանող փաստաթղթով՝ մինչև մարում օրերի քանակի հաշվարկի հիմք ընդունելով Կատարման ամսաթիվը:

2.1.21 **Բանկային օր**՝ օրացուցային շաբաթվա այն օրն է, երբ Կենտրոնական բանկը տրամադրում է Համակարգում՝ սույն համաձայնագրով նախատեսված գործառնությունների կատարման հնարավորություն:

2.1.22 **Գործառնական օր**՝ Բանկային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի հաճախորդների սպասարկումը:

2.1.23 **Աճուրդ**՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարք կնքելու նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որի ժամանակ Բանկերը ներկայացնում են Հայտեր:

2.1.24 **Աճուրդի հայտարարման ամսաթիվ (օր)**՝ Կենտրոնական բանկի կողմից Աճուրդի անցկացման վերաբերյալ հայտարարության հրապարակման օր:

2.1.25 **Աճուրդի օր**՝ Աճուրդի կազմակերպման օրն է:

2.1.26 **Աճուրդի իրականացում կամ կազմակերպում**՝ Բանկերի կողմից ուղարկված Հայտերի ամփոփում, արդյունքների հաստատում և արդյունքների մասին տեղեկացում:

2.1.27 **Չեղյալացում**՝ Համակարգում հայտարարված աճուրդի և(կամ) ընդունված Հայտի չեղյալ ճանաչելը:

2.1.28 **Գործարքի կատարում**՝ կնքված Գործարքի Կողմերի կողմից այդ գործարքով ստանձնած իրենց փոխադարձ պարտավորությունների կատարում:

2.1.29 **Համակարգ**՝ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող Պարտատոմսերի առքի ու վաճառքի գործարքների իրականացման համար օգտագործվող ավտոմատացված տեխնիկաձրագրային ամբողջություն, որը նախատեսված է Համակարգի օպերատորի մոտ

Աճուրդների հայտարարման, Աճուրդների իրականացման, Կենտրոնական բանկի և Բանկերի միջև գործարքների կնքման (մերժման) և դրանց հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման, ինչպես նաև սույն համաձայնագրով սահմանված այլ գործառույթների իրականացման համար.

2.1.30 **Համակարգի օպերատոր՝** Կենտրոնական բանկ, որը պատասխանատվություն է կրում Համակարգի անխափան աշխատանքի և զարգացման համար.

2.1.31 **Համակարգի անդամներ՝** Կենտրոնական բանկը և Բանկերը.

2.1.32 **Լիազոր օգտագործող՝** Բանկի լիազորված անձ, որը Բանկի անունից գրանցվել է Համակարգում համապատասխան գործառնություններ իրականացնելու համար.

2.1.33 **Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգ՝** Կենտրոնական բանկի կողմից Սի-Բի-Էյ-Նեթ համակարգչային ցանցի հիման վրա շահագործվող էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգ, որը ապահովում է Կենտրոնական բանկին ուղղված և Կենտրոնական բանկից էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը և ստացումը.

2.1.34 **Մոնիթորինգ համակարգ՝** իրական ժամանակի ռեժիմում օգտագործվող ավտոմատացված տեխնիկաձրագրային ամբողջություն, որը ապահովում է Հայտերի ուղարկումը և Բանկերին հասանելի տեղեկատվության տրամադրումը, ըստ սահմանված ընթացակարգերի.

2.1.35 **Դրամային հաշիվ՝** Բանկի անունով Կենտրոնական բանկում բացված և վարվող Հայաստանի Հանրապետության դրամով թղթակցային հաշիվ.

2.1.36 **Դեպո հաշիվ՝** սեփական ազատ կարգավիճակով Պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված Կենտրոնական պահառուի գրառումների բազմություն.

2.1.37 **Թվաբանական կլորացման կանոններ՝** կլորացման այն մեթոդը, որի դեպքում կլորացման ենթակա միավորը չի փոխվում, եթե կլորացման ենթակա միավորին հաջորդող թիվը հավասար է 0-4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա միավորին հաջորդող թիվը հավասար է 5-9-ի:

2.2 Սույն համաձայնագրում կիրառվող այլ հասկացություններն ունեն Կենտրոնական բանկի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները և դրանց կիրառման մեխանիզմները սահմանող և կարգավորող իրավական ակտով սահմանված նշանակությունները:

2.3 Սույն համաձայնագրի կարգավորման շրջանակում ընդգրկվող (կարգավորման առարկա հանդիսացող), սակայն չկարգավորված կամ չմանրամասնեցված, կամ ոչ լիարժեք կարգավորված հարաբերությունները կարգավորվում (մանրամասնեցվում կամ հստակեցվում) են Կենտրոնական բանկի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները և դրանց կիրառման մեխանիզմները սահմանող և կարգավորող իրավական ակտով:

### **Հոդված 3. Համակարգում Բանկերի գրանցումը**

3.1 Համակարգին անդամակցելու համար Բանկը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- 1) Անդամակցություն Սի-Բի-Էյ-Նեթ համակարգչային ցանցին, այդ թվում՝ Լիազոր օգտագործողի համակարգչի միացում Սի-Բի-Էյ-Նեթ համակարգչային ցանցին,
- 2) Կենտրոնական բանկում Դրամային հաշվի առկայություն,
- 3) Անդամակցություն «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին»,
- 4) Անդամակցություն «Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգին»,
- 5) Լիազոր օգտագործողի համակարգչին ներկայացվող նվազագույն տեխնիկական չափանիշների բավարարում (համաձայն Հավելված 3-ի)
- 6) Կենտրոնական պահառուի մոտ Դեպո հաշվի առկայություն:

3.2 Համակարգում Բանկի և վերջիններիս Լիազոր օգտագործողների գրանցումը, փոփոխումը կամ հեռացումը կատարվում է Համակարգի օպերատորի կողմից:

3.3 Մինչույն Բանկը կարող է ունենալ Համակարգում գրանցված մի քանի Լիազոր օգտագործողներ, որոնց կարող են տրվել տարբեր իրավասություններ:

3.4 Համակարգում գրանցված յուրաքանչյուր Բանկի Լիազոր օգտագործողին տրվում է վերջինիս նույնականացնող կոդ (ID), որը ունիկալ է և թույլ է տալիս տվյալ Լիազոր օգտագործողին մուտք գործել Համակարգ, կատարել համապատասխան գործառնություններ՝ ըստ իրեն վերապահված իրավասությունների:

3.5 Եթե Բանկը (Լիազոր օգտագործողը) դեռ չի գրանցվել Համակարգին անդամակցող Բանկերի (Լիազոր օգտագործողների) ցանկում, ապա վերջինս չի կարող Համակարգի միջոցով գործառնություններ իրականացնել:

3.6 Համակարգում Բանկի և վերջինիս Լիազոր օգտագործողների գրանցման համար Բանկը Համակարգի օպերատորին ներկայացնում է դիմում՝ համաձայն Հավելված 1-ի և Հավելված 2-ի: Ընդ որում՝

- 1) Բանկը ներկայացնում է Լիազոր օգտագործողների և վերջիններիս կողմից իրականացվող գործառնությունների ցանկը, ըստ Լիազոր օգտագործողների:
- 2) Յուրաքանչյուր Լիազոր օգտագործողի հետ կապված իրավասությունների տրամադրման կամ հեռացման համար Բանկը ներկայացնում է դիմում համաձայն սույն համաձայնագրի Հավելված 2-ի:
- 3) Համակարգի օպերատորի կողմից Բանկի, ինչպես նաև վերջինիս Լիազոր օգտագործողների գրանցման կամ մերժման դեպքում վերջինիս տրվում է համապատասխան տեղեկացում այդ մասին (Սի-Բի-Էյ-Նեթ համակարգչային ցանցով կամ հեռախոսով):
- 4) Համակարգի օպերատորը մերժում է Բանկի, ինչպես նաև վերջինիս Լիազոր օգտագործողների գրանցումը, եթե սույն համաձայնագրով սահմանված կարգով չեն ապահովվել ներկայացվող պահանջները, դիմումի լրացման ձևը ներկայացվել է ոչ ճշգրիտ կամ ներկայացվել են ոչ ամբողջական տվյալներ:

Սույն կետում նշված դիմումները՝ Կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային եղանակով: Համակարգի օպերատորի կողմից Համակարգում Բանկի և վերջինիս Լիազոր

օգտագործողների գրանցումը (մերժումը) կատարվում է սույն կետում նշված յուրաքանչյուր համապատասխան դիմումի ընդունումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

#### **Հոդված 4. Մոնիթորինգ համակարգի միջոցով Բանկերի կողմից իրականացվող գործառնությունները**

4.1 Յուրաքանչյուր Բանկի համար Մոնիթորինգ համակարգում առանձնացվում է համապատասխան աշխատանքային տիրույթ՝ ըստ իրեն տրված իրավասությունների: Մոնիտորինգ համակարգը ապահովում է ըստ Բանկերի առանձնացված աշխատանքային տիրույթում առկա տվյալների հասանելիությունը միայն վերջինիս Լիազոր օգտագործողների համար:

4.2 Բանկի Մոնիթորինգ համակարգում աշխատանքային տիրույթը (այդ թվում՝ Հայտերի ներկայացումը) Լիազոր օգտագործողին կարող է հասանելի լինել՝

- 1) Բանկի մոտ տեղակայված Լիազոր օգտագործողի համակարգչի միջոցով,
- 2) Կենտրոնական բանկում տեղակայված աշխատանքային կայանի միջոցով:

4.3 Բանկերը Մոնիթորինգ համակարգի միջոցով կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.

- 1) Կենտրոնական բանկի կողմից հայտարարված աճուրդի տվյալների դիտարկում,
- 2) Աճուրդի կամ երկկողմանի Գործարքների Հայտերի մուտքագրում, ներկայացում, դիտարկում (կարգավիճակների դիտարկում), փոխարինում, չեղյալացում, կնքված Գործարքների դիտարկում:

4.4 Միայն Համակարգում գրանցված համապատասխան իրավասություններ ունեցող Լիազոր օգտագործողները կարող են ներկայացնել (փոփոխել, չեղյալացնել, դիտարկել) Հայտերը, որոնք հիմք են հանդիսանում Համակարգի կողմից դրանց հետագա մշակման համար: Հայտերից բացի Մոնիթորինգ համակարգի միջոցով այլ հաղորդագրություններ չեն ներկայացվում:

4.5 Մոնիտորինգ համակարգում Լիազոր օգտագործողը Հայտը կարող է մուտքագրել երկու եղանակով.

- 1) Անմիջապես աշխատանքային տիրույթում ձևավորում և հաստատում է իր Հայտը,
- 2) Իր էլեկտրոնային կրիչի վրայից Մոնիտորինգ համակարգի համապատասխան գործիքի միջոցով վերբեռնում է նախօրոք ձևավորված Հայտի տվյալները՝ սահմանված ձևաչափին համապատասխան:

#### **Հոդված 5. Համակարգում հայտարարվող տվյալների ներկայացումը, հայտարարված աճուրդի չեղյալացումը**

5.1 Գործարքները կարող են կնքվել հայտարարված Աճուրդի և/կամ երկկողմանի բանակցությունների միջոցով: Երկկողմանի բանակցություններով Գործարքների կնքման համար Համակարգում այդ Գործարքների հետ կապված առանձին չափանիշների հայտարարություն կարող է չտրվել:

5.2 Աճուրդի միջոցով Գործարքների կնքման համար Համակարգում նախապես մուտքագրվում են հայտարարվող Աճուրդի հետ կապված տվյալներ:

5.3 Համակարգում հայտարարված Աճուրդի վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը Լիազոր օգտագործողներին հասանելի է՝

- 1) Մոնիթորինգ համակարգի միջոցով,
- 2) Կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջի միջոցով,
- 3) Սի-Բի-Էյ-Նեթ համակարգչային ցանցով՝ համապատասխան իրավասու հասցեների միջոցով:

5.4 Համակարգում հայտարարված Աճուրդը ցանկացած պահի կարող է չեղյալացվել, մինչև Աճուրդի Հայտերի ակցեպտավորումը: Հայտարարված Աճուրդը կարող է չեղյալացվել անկախ Բանկերի կողմից Հայտերի ներկայացման հանգամանքից:

5.5 Համակարգում հայտարարված Աճուրդը չեղյալ հայտարարելու դեպքում Բանկերի կողմից այդ Աճուրդի հետ կապված ներկայացված բոլոր Հայտերը համարվում են չեղյալ:

5.6 Եթե հայտարարված Աճուրդը չեղյալացվել է, ապա Բանկերի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտեր չեն կարող ներկայացվել:

5.7 Համակարգում հայտարարված Աճուրդի չեղյալացման վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը Լիազոր օգտագործողներին կարող է հասանելի լինել

- 1) Մոնիթորինգ համակարգի միջոցով,
- 2) Կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջի միջոցով
- 3) Սի-Բի-Էյ-Նեթ համակարգչային ցանցով՝ համապատասխան իրավասու հասցեների միջոցով:

## **Հոդված 6. Հայտերի ներկայացումը, ընդունումը և մերժումը**

6.1 Գործարքներ կնքելու նպատակով Հայտերի ներկայացումը, ընդունումը, մերժումը կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.

6.1.1 Բանկի կողմից Հայտերը ներկայացվում են Մոնիթորինգ համակարգին միացված Լիազոր օգտագործողի համակարգչի միջոցով իրական ժամանակում առցանց սկզբունքով՝ ըստ Կենտրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների: Վերջինիս միջոցով նշված Հայտերի ուղարկման անհնարինության դեպքում դրանք կարող են Կենտրոնական բանկ ներկայացվել Կենտրոնական բանկում տեղակայված աշխատանքային կայանի միջոցով:

6.1.2 Աճուրդի Հայտերը մուտքագրվում և ընդունվում են տվյալ Աճուրդի համար Համակարգում մուտքագրված Հայտերի ընդունման մեկնարկային ժամից սկսած մինչև Հայտերի ընդունման դադարեցման ժամը: Համակարգում հայտարարված Աճուրդի համար Բանկերից Հայտերի ընդունումը դադարեցվում է ավտոմատ: Հայտերի ընդունման դադարեցման ժամից ուշ ներկայացված Աճուրդի Հայտերը Համակարգում ավտոմատ մերժվում են:

6.1.3 Եթե Աճուրդի օրվա մինչև Հայտերի ընդունման դադարեցման ժամը տեխնիկաձրագրային խնդիրների պատճառով Հայտերի ստացումը և ընդունումը անհնարին է լինում, ապա աճուրդային գործընթացը դադարեցվում է և 1.5 ժամվա ընթացքում

Բանկերին հայտարարվում է Աճուրդը հետաձգելու կամ չեղյալ համարելու և/կամ նոր Աճուրդ անցկացնելու վերաբերյալ որոշումը:

6.1.4 Բանկի կողմից Կենտրոնական բանկ թղթային եղանակով ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից չի ընդունվում:

6.1.5 Համակարգում՝ Աճուրդի տվյալներին, Լիազոր օգտագործողներին և Բանկի իրավասություններին, համակարգում կիրառվող իմաստաբանական չափանիշներին համապատասխան, իրականացվում է Բանկի կողմից ներկայացված Հայտի ստուգում: Համակարգում սահմանված ստուգման պահանջների ապահովման դեպքում Բանկի ուղարկված Հայտը ստանում է ընդունված կամ մերժված կարգավիճակ, իսկ Բանկը ստանում է համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն:

6.1.6 Բանկը կարող է փոփոխել ներկայացված Աճուրդի Հայտի պայմանները մինչև տվյալ Աճուրդի Հայտերի ընդունման դադարեցման ժամը՝ այն փոխարինելով նոր Հայտով: Երբ ընդունված Հայտում Բանկը կատարում է փոփոխություններ՝ Համակարգի կողմից այն դիտարկվում է որպես ներկայացված նոր Հայտ, որի ընդունման հետ կապված վերջինիս տրվում է նոր ծանուցում էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Յուրաքանչյուր նոր Հայտի ընդունման դեպքում նախորդ Հայտը ստանում է չեղյալացված կարգավիճակ և այլևս չի մասնակցում Աճուրդին:

6.1.7 Ներկայացված երկկողմանի գործարքի Հայտի պայմանները Բանկը կարող է փոփոխել մինչև այդ Հայտի հաստատումը Կենտրոնական բանկի կողմից: Այս Հայտի փոփոխումը Բանկի կողմից կարող է կատարվել ներկայացված նախորդ Հայտի պայմանները փոփոխելու միջոցով: Համակարգի կողմից այն դիտարկվում է որպես ներկայացված նոր Հայտ, որի ընդունման հետ կապված վերջինիս տրվում է նոր ծանուցում էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Ընդ որում՝ երկկողմանի Հայտի պայմանների փոփոխման դեպքում նախորդ Հայտը ավտոմատ կերպով չի չեղարկվում:

## **Հոդված 7. Գործարքների կնքումը**

7.1 Գործարքների կնքումը կատարվում է համաձայն սույն համաձայնագրի.

7.1.1 Գործարքները կարող են կնքվել հայտարարված Աճուրդի և/կամ երկկողմանի բանակցությունների միջոցով,

7.1.2 Համակարգում Հայտի հաստատումը կամ չբավարարումը կարող է իրականացվել միայն այն Հայտի համար, որը Համակարգի կողմից ընդունվել է և ստացել Գործարքների կնքմանը մասնակցելու կարգավիճակ՝ համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության միջոցով Բանկին ծանուցելով,

7.1.3 Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և Կողմերը ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:

7.1.4 Երկկողմանի Գործարքի Հայտը չի կարող մասնակի հաստատվել:

7.1.5 Երկկողմանի Գործարքի Հայտի Հաստատումը կատարվում է Աճուրդի իրականացման ընթացակարգից զատ՝ միմյանցից անկախ:



7.1.6 Հայտում նշվում են Բանկի կողմ, Աճուրդի համարը, Գործարքի տեսակը, Պարտատոմսի թողարկման համարը, Պարտատոմսի անվանական արժեքը(ները) և Եկամտաբերությունը(ները), ընդ որում՝ յուրաքանչյուր Եկամտաբերությանը պետք է համապատասխանի միայն մեկ Պարտատոմսի անվանական արժեք, և յուրաքանչյուր Առաջարկության Եկամտաբերությունը մնում է անփոփոխ անգամ այն դեպքում, երբ Բանկի կողմից ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից բավարարվում է մասնակի:

7.2 Համակարգով գործառնությունների իրականացման հետ կապված Գործարքի գումարի կլորացումները կատարվում են մեկ դրամի ճշտությամբ՝ ըստ թվաբանական կլորացման կանոնների:

7.3 Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Աճուրդի Հայտը պարտավոր է հաստատել (մասնակի հաստատել) կամ մերժել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:

7.4 Կնքված յուրաքանչյուր Գործարք համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մաս:

## **Հոդված 8. Գործարքների կատարումը**

8.1 Սույն համաձայնագրով նախատեսված Գործարքների ՀՀ դրամով գործառնությունները իրականացվում են բացառապես վճարման անկանխիկ ձևով Կենտրոնական բանկի կողմից անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման, Բանկի Դրամային հաշվին մուտքագրելու կամ ելքագրելու միջոցով, իսկ Պարտատոմսերով գործառնությունները՝ Կենտրոնական պահառուի մոտ վարվող Բանկի Դեպո հաշվին մուտքագրելու կամ ելքագրելու միջոցով:

8.2 Կնքված Գործարքները պետք է կատարվեն ամբողջությամբ, ընդ որում՝ յուրաքանչյուր Հայտում բավարարված առաջարկությունները մասնակի չեն կատարվում, այլ՝ ամբողջությամբ:

8.3 Պարտատոմսի առքի դեպքում Կատարման ամսաթվին Կենտրոնական բանկը Բանկի Դեպո հաշվից գանձում է Հայտի բավարարված առաջարկությունների Պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարի չափով Պարտատոմսերը, որից հետո (կամ միաժամանակ) նույն Բանկային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը Բանկի Դրամային հաշվին պարտավոր է մուտքագրել բավարարված Գործարքի գումարների հանրագումարի չափով ՀՀ դրամը:

8.4 Պարտատոմսի վաճառքի դեպքում Կատարման ամսաթվին Կենտրոնական բանկը Բանկի Դրամային հաշվից գանձում է բավարարված Գործարքի գումարների հանրագումարի չափով ՀՀ դրամը, որից հետո (կամ միաժամանակ) նույն Բանկային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը Բանկի Դեպո հաշվին պարտավոր է մուտքագրել Հայտի բավարարված առաջարկությունների Պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարի չափով Պարտատոմսերը:

8.5 Անակցպետ գործողությամբ փաստացի կատարված գործառնությունները հանդիսանում են Բանկի հաշիվներին (դրամային և Դեպո) մուտքագրումներ կամ ելքագրումներ:

8.6 Կենտրոնական բանկը Գործարքով ամրագրված գործառնությունները կատարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում:

## **Հոդված 9. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

9.1 Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կնքվող Գործարքների գաղտնիությունը:

9.2 Կողմերը պարտավորվում են սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում և պայմաններով կատարել համապատասխան փոխանցումները և/կամ վճարումները:

9.3 Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում Բանկի Դրամային հաշվից անվիճելի (անակցպետ) կարգով գանձել սույն համաձայնագրի հոդված 10-ով նախատեսված տուժանքի գումարները:

9.4 Կենտրոնական բանկը կարող է կատարել դրամական պարտավորությունների հաշվանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 426-րդ և 921-րդ հոդվածներով սահմանված կարգով և դեպքերում:

## **Հոդված 10. Կողմերի պատասխանատվությունը**

10.1 Կատարման ամսաթվին մինչև Գործառնական օրվա ավարտը Պարտատոմսի առքի դեպքում Հայտի բավարարված առաջարկությունների Պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարի չափով Պարտատոմսերը Բանկի Դեպո հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարվում է տուժանք՝ բավարարված Գործարքի գումարների հանրագումարի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

10.2 Կատարման ամսաթվին մինչև Գործառնական օրվա ավարտը Պարտատոմսի վաճառքի դեպքում բավարարված Գործարքի գումարների հանրագումարի չափով ՀՀ դրամը Բանկի Դրամային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարվում է տուժանք՝ բավարարված Գործարքի գումարների հանրագումարի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

10.3 Սույն համաձայնագրի 10.1-10.2 կետերով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Կատարման ամսաթվից հաշված առավելագույնը երկու Բանկային օր, որից հետո Բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

10.4 Սույն համաձայնագրի 10.1-10.2 կետերով նախատեսված տուժանքները գանձելիս Բանկի Դրամային հաշվում գանձման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը Բանկի Դրամային հաշվից գանձում է

համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով, մինչև գանձման ենթակա տուժանքների ամբողջական մարումը:

### **Հոդված 11. Վեճերի լուծման կարգը**

11.1 Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Բանկային օրվա ընթացքում:

11.2 Կողմերի միջև առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **Հոդված 12. Համաձայնագրի գործողության ժամկետը**

12.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

12.2 Բանկին անվճարունակ, նրա բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից տվյալ Բանկը զրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքներ կնքելու իրավունքից:

12.3 Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 12.2 կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:

12.4 Ցանկացած Կողմ կարող է սույն համաձայնագրից հրաժարվել՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր կերպով ծանուցելով մյուս Կողմին, եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:

12.5 Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է գործարքի կնքումից առնվազն երկու Բանկային օր առաջ գրավոր ձևով սույն համաձայնագրի մյուս Կողմին տեղեկացնել իրավաբանական, փոստային, Սի Բի Էյ նեթ համակարգչային ցանցի էլեկտրոնային հասցեների, վճարային ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի և այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը:

### **Հոդված 13. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)**

13.1 Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե այն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք է:

13.2 Սույն համաձայնագրի 13.1 կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից և այլ

հանգամանքներ, որոնք սույն համաձայնագրի դրույթները խախտող Կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

**Հոդված 14. Համաձայնագրի փոփոխությունները և այլ դրույթներ**

14.1 Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 օրինակից (յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ): Երկու օրինակն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրին կցվող հավելվածները կազմում են նրա բաղկացուցիչ մասը:

14.2 Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված են Կողմերի կողմից:

14.3 Իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում սույն համաձայնագրում, ինչպես նաև դրանց հետագա փոփոխությունները և լրացումները պարտադիր են Կողմերի համար՝ իրավական ակտի ընդունման մասին Բանկին ցանկացած եղանակով ծանուցելուն հաջորդող օրվանից՝ առանց սույն համաձայնագրի սույն համաձայնագրի 14.2 կետում նախատեսված կարգով համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու:

14.4 Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Կողմերը համաձայնվում են ուժը կորցրած ճանաչել Կողմերի միջև «\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_\_ թ. կնքված թիվ \_\_\_\_\_ համաձայնագիրը:

**Հոդված 15. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	Բանկի անվանում _____																					
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ., 6	Հայաստանի Հանրապետություն, _____, ք. Երևան, _____ փ., _____																					
Հեռախոս՝ _____	Հեռախոս՝ _____																					
Ֆաքս՝ _____	Ֆաքս՝ _____																					
	Թղթակցային հաշիվ Կենտրոնական բանկում (Դրամային հաշիվ) <table border="1" style="display: inline-table; vertical-align: middle;"> <tr> <td>&lt;&lt; դրամ</td> <td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td> </tr> </table>	<< դրամ																				
<< դրամ																						
Դեպո հաշիվ Կենտրոնական պահառուի մոտ՝ _____	Դեպո հաշիվ Կենտրոնական պահառուի մոտ՝ _____																					
<< կենտրոնական բանկի նախագահ՝ _____	Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝ _____																					

«\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ р.

«\_\_» «\_\_\_\_\_» 20\_\_ р.

**Դիմում**

**ՀՀ Կենտրոնական բանկի Պետական պարտատոմսերի առքի ու վաճառքի գործարքների իրականացման և Մոնիթորինգ համակարգերին Բանկի միացման մասին**

Սույնով խնդրում եմ՝

(Բանկի անվանումը)

1. Միացնել

Պետական պարտատոմսերի առքի ու վաճառքի գործարքների իրականացման համակարգին,

Պետական պարտատոմսերի առքի ու վաճառքի գործարքների իրականացման համակարգի Մոնիթորինգ համակարգին

2. Բանկին ուղղված տեղեկատվության ուղարկման հասցեներ՝

ա. \_\_\_\_\_  
Սի Բի Էյ Նեթ Էլեկտրոնային հասցե 1

բ. \_\_\_\_\_  
Սի Բի Էյ Նեթ Էլեկտրոնային հասցե 2

գ. \_\_\_\_\_  
Սի Բի Էյ Նեթ Էլեկտրոնային հասցե 3

3. Միաժամանակ հավաստում եմք, որ ընդունում եմք Պարտատոմսերի առքի/վաճառքի գործարքների իրականացման համակարգի պահանջները, ինչպես նաև հաստատում եմք ՀՀ օրենքին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի որոշումներին համապատասխան գործելու մեր համաձայնությունը:

4. Հեռախոս՝ ա) \_\_\_\_\_, բ) \_\_\_\_\_, գ) \_\_\_\_\_

Գործադիր

մարմնի ղեկավար՝ \_\_\_\_\_

(պաշտոնը)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

« \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20\_\_ թ.

**Դիմում**

**ՀՀ Կենտրոնական բանկ Պետական պարտատոմսերի առքի ու վաճառքի գործարքների իրականացման համակարգի Մոնիթորինգ համակարգում Լիազոր օգտագործողների գրանցման (հեռացման), նրանց իրավասությունների տրամադրման մասին**

Սույնով խնդրում եմք

- Թույլատրել (տրամադրել) սահմանված իրավասությունները
- Արգելել նախկին իրավասությունները

Պետական պարտատոմսերի առքի ու վաճառքի գործարքների իրականացման համակարգի Մոնիթորինգ համակարգում

\_\_\_\_\_ -ին

(Լիազոր օգտագործողի անուն ազգանուն)

հանդես գալ \_\_\_\_\_ Բանկի

(ընկերության՝ որպես Բանկ անվանումը)

անունից, որպես Լիազոր օգտագործող:

Լիազոր օգտագործողին տրամադրել միայն նշված իրավասությունները, որոնք հանդիսանում են ամբողջական և վերջնական:

Սույն դիմումով ներկայացված իրավասությունների ցանկը հիմք է հանդիսանում նշված Լիազոր օգտագործողի համար նախկինում սահմանված իրավասությունների փոխարեն նորը սահմանելու համար:

- Տրամադրել Մուտքի անուն \_\_\_\_\_ (login name)

Իրավասության անվանումը	Թույլատրվող իրավասություններ
Պետական պարտատոմսերի առքի / վաճառքի Աճուրդի Հայտերի մուտքագրում	<input type="checkbox"/>
Պետական պարտատոմսերի առքի / վաճառքի երկկողմանի գործարքների Հայտի մուտքագրում	<input type="checkbox"/>

Պետական պարտատոմսերի առքի / վաճառքի Ուղարկված Հայտերի դիտում	<input type="checkbox"/>
Պետական պարտատոմսերի առքի / վաճառքի Ընդունված Հայտերի դիտում	<input type="checkbox"/>
Պետական պարտատոմսերի առքի / վաճառքի Ակցեպտավորված առաջարկների դիտում	<input type="checkbox"/>

Հեռախոս՝ ա) \_\_\_\_\_, բ) \_\_\_\_\_, գ) \_\_\_\_\_

Գործադիր

մարմնի ղեկավար՝ \_\_\_\_\_

(պաշտոնը)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

« \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20\_\_ թ.



**Լիազոր օգտագործողի համակարգչին ներկայացվող նվազագույն պահանջներ**

Անվանում	Նվազագույն ցուցանիշ
Ցանցային քարտ	Ethernet 10 ՄԲիտ
Օպերացիոն համակարգ	Windows Professional XP, Vista, կամ Windows 7  TCP/IP կանխագրերի աջակցում
Բրնուզեր	IE7 և բարձր, Mozilla 2.0 և բարձր, Opera
silverlight	installed
Javascript	Enabled